

նարկներով խօսելու՝ քան խօսքով, ուրիշներ ալ կը խօսին միջանկեալ պարբերութիւններով և հասարակաց տեղիքներով, որով կը ծածկեն բոլոր պատահականները և կը գոցեն խօսքին բոլոր ծակերը, ոմանք ալ բարձր փնտռելու ժամանակ ունենալու համար՝ չորս դէն կը ցանեն անվերջա՝ նալի բայցեր և կը տնկեն խոշոր սակայններ՝ որոնց կը յնուեն իրրեւ գաւազանի մը վրայ. ուրիշներ ալ, ամէն կողմանէ փախչող պարբերութիւնները բռնելու համար՝ երկայն հանգիստներ կ'առնուեն, չնչին բան մ'ալ ըսելու ժամանակ՝ մտածութիւն խոր աշխատութիւն մը կամ յանկարծական ցրուածութիւն մը կամ ձանձրացած մարդու մը չկամութիւնը ձեւացնելով, որ կ'ըսէ՝ պարզապէս ըսելու համար, առանց ըսածին ուշադրութիւն դնելու: Որչափ ճարտարութիւն, ինչ բռնազօռ կերպեր՝ ազգային լեզուին մէջ իրենց տգիտութեան ծրծագելիւթիւնը պարտելիլու համար:

Մեր ցուցահանդէսն մարդկացնելու համար, յիշենք նաեւ զանոնք՝ որ չեն խօսիր, զանոնք՝ որ չեն յաճախեր այն ընկերութիւններուն մէջ՝ ուր մարդը լեզուով կը խօսուի, կամ կ'երթան իրրեւ պարզ պատմի համար, կարծես փշերու վրայ կեցած ըլլային, անհանգիստ, կամ ըստ կարելոյն քիչ խօսելով նոյն իսկ ի վնաս իրենց և զեղացի կամ տառաած երևնալու վտանգի ենթարկուելով: անոնք՝ որ այս պատճառաւ կը խորշին իրենց ծանօթեւորէն և նոյն իսկ մարդը լեզուով խօսող բարեկամներէն, իրենց ալ փոխադարձաբար խորշելի կ'ըլլան անոնցմէ՝ երբ կը ծաղրեն զանոնք իրրեւ յամառ իմաստակներ՝ և ազնուապետականներ. ուրիշներ՝ որ դեռ աւելի առաջ ալ կ'երթան, որ իրենց հակակրօնութիւնը չեն ծածկեր դէպ ի ուրիշ գաւառներու բոլոր ազգայինները, որոնց հետ խօսելու բռնազատուած ըլլալով, հասկնալի ըլլալու համար՝ ստիպուած են մարդը լեզուով խօսելու: Կայ նաեւ անուղղայ տմարդիներու քաղմաթիւ ընտանիք մը, որ ինչ ընկերութեան մէջ ևս զտնուիւն՝ գիտնալով հանդերձ թէ ոչ ոք

պիտի հասկնայ իրենց ըսածը՝ աներեսաբար կը յամառին իրենց Գաւառաբարբառը գործածելու, պարզելով տգիտութեան վրէժակներն՝ որուն վրայ գրած են. — Ո՛վ որ ըսածս հասկնայ, լաւ. ո՛վ որ չհասկնայ, ազատ է, — նման այն բանազգուշող գինեղներուն՝ որ սրններու հետ խօսելու կը զբաղին:

Բայց խօսքով աղքատ եղողներու մեծ ընտանեաց մէջ կայ անձ մը, զոր դու ուրիշներէն աւելի լաւ պէտք ես ճանչնալ, վասն զի կը ներկայացնէ վտանգաւոր և շատ տարածուած ձկտումը, որմէ աւելի պէտք ես զգուշանալ քան ուրիշ ո՛ր և է բանէ: Եւ, իմ ճանչցածներուս մէջ, եզական անձերու շարքի մը մէջ առաջինն է զոր քեզ ի մօտոյ պիտի ծանօթացնեմ՝ Թէ՛ սովորեցնելու և Թէ՛ զուարճացնելու համար՝ մեր միասին ընելիք ճանապարհորդութեան ընթացքին մէջ:

Ամենէն առաջ՝ կը ներկայացնեմ. — Պարոն Բաբը:

(Շարունակելի) Թրգմ. Յօրն. Հ. Ա. ՅՈՎԹ.

ՀՐԵՇՏՍԿԻԿՆԵՐ ՈՍԿԵՆՍՍ

Տօն է. (Ձատիկ): Հուպ խորանին մեծ՝ Ապգ, Եօթնաստիճան բեմի բարձունքը բռնած, Գեռ աղածրի սիրուն մանկունք պարարակ՝ Ուխտի եկեր ու կ'աղօթեն ձեռնամաձ...

Ո՛վ գեղահրաճ դու տեսարան. Երբէք պատկեր մը նըրբակերտ ու նարոտ՝ Մէջն իւր եզրին ոսկեծածան Զի փողփողեր հըրապուրանք մը զըթոտ, Ինչպէս այստեղ՝ գիրկը բեմի՝ Ամբողունակ այս մանկիկներն աղօթիկեր՝ — Մարգարիտներ Եղեմի — Զորս ինքն Յիսուս՝ գորովագին է զըրկեր...

Ելէ՛ք, տղա՛քս, երբ Պատարագն աւարտի, Եկէ՛ք ինձ մօտ, ձեր ճակատին համբոյր տամ... Զերմակ շուշան՝ կարմիր կոկոն մ'էք վարդի, Սըրբասարաս հրեշտակիկներ ոսկեծամ, «Հոգեւտալիղ Նուագներ»

Հ. ԳԻՐԳՈՐՈՍ. Ա.